

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

15.04. 2005

2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվության մասին

«Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-28-Ն, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 4 փետրվարի 2004թ., թիվ 7 (306)) սահմանված ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումները, «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 10 և 11 հոդվածներով սահմանված պահանջների համաձայն, արտացոլվել են «2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում», ինչը հաստատվել է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ ՀՀ ՎՊԽ) կողմից և հրապարակվել (ՀՀ ԳՆԱՏ, 15 ապրիլի 2004թ., թիվ 9 (157)):

Հիմք ընդունելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրով սահմանված աշխատանքները (միջոցառումները), 2004թ. նախատեսված և իրականացման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալը (հաշվի առած պարբերականությունը) կազմել է 1793 միավոր, որից իրականացվել են 1790-ը կամ 99.8%-ը:

Չկատարված 3 աշխատանքներից 2-ի չիրականացումը հիմնականում պայմանավորված է հանրապետության տարածքում հիմնական միջոցների վերաբերյալ համընդգրկուն վարչական տեղեկատվական բազայի թերձևավորմամբ, իսկ մեկը՝ ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրի իրականացման ժամանակացույցի փոփոխությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների միջոցների հաշվին:

2004թ-ի համար նախատեսված ֆինանսավորումը կատարվել է 95.5%-ով և կազմել 546.8 միլիոն դրամ: Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է դոնոր կազմակերպությունների և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից:

2004թ-ին թղթային և էլեկտրոնային կրիչներով հրապարակվել են 73 անվանում վիճակագրական հրապարակումներ (թղթային կրիչներով 31.3 հազարից ավելի տպաքանակով), որոնք զետեղված են նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ ՀՀ ԱՎԾ) բաց գրադարանում (գրադարանային ֆոնդը 2004թ. տարեվերջին կազմել է 6791 միավոր) և 1999թ. ապրիլից գործող ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

Տեղեկատվության միջազգային փոխանակման շրջանակում 2004թ-ին հրապարակման նպատակով համապատասխան վիճակագրական կազմակերպություններին է տրամադրվել թվով 253 անվանում լրացված հարցաթերթ, որից ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին՝ 167:

2004թ-ին ՀՀ ԱՎԾ են այցելել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ազգային վիճակագրական ծառայությունների 16 հանձնախմբեր և 22 փորձագետներ: ՀՀ ԱՎԾ աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան 18 երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների,

աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների և այլ միջոցառումների (այցենասանակցությունների թիվը՝ 58):

Հայաստանում կազմակերպված մնանատիպ միջգերատեսչական բնույթի և այլ կազմակերպությունների մասնակցությամբ միջոցառումներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների այցենասանակցությունները կազմել են 204: Իսկ ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպված 7 սեմինար-խորհրդակցություններին նրանց այցենասանակցությունների թիվը կազմել է 190:

2004թ-ին ՀՀ ՎՊԽ կողմից ընդունվել է 108 որոշում, որից 42 նորմատիվ, 16 անհատական և 50 արձանագրային: Նորմատիվ որոշումները ՀՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են և հրապարակվել ՀՀ ԳՆԱՏ-ներում:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2004թ. ընթացքում փաստաթղթաշրջանառության թվային պատկերը հետևյալն է.

1. Մտից թղթակցություն, ընդամենը - 4859 միավոր
2. Ելից թղթակցություն, ընդամենը – 7130 միավոր:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքներից կարևորությամբ և/կամ մասշտաբայնությամբ հիշատակման է արժանի Եվրամիության «ՏԱՍԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-6» նախագծի շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» ազգային դասակարգիչը (տես նաև՝ ՀՀ ԳՆԱՏ, 11 մարտի 2005թ., թիվ 5¹, I-VI հատորներ), որի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրամիությունում կիրառվող CPA և PRODCOM դասակարգիչները: Սույն դասակարգիչն, ըստ էության, բխում է ՀՀ ԱՎԾ կողմից Եվրամիության «ՏԱՍԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-2» նախագծի շրջանակում, Եվրոպական համայնքի տնտեսական գործունեության տեսակների (NACE) դասակարգիչի հիման վրա մշակված և կիրառվող «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» (տես՝ ՀՀ ԳՆԱՏ, 14 նոյեմբերի 2001թ., թիվ 19(82)) տրամաբանությունից և ըստ այդմ, նախադրյալներ ստեղծում երկրում տեխնիկատնտեսական տեղեկատվության կողավորման միասնական ու արդեն իսկ ավարտուն և ամբողջական՝ «գործունեության տեսակ - արտադրանք» դասակարգչային գործիքակազմի ներդրման համար:

*

* * *

«2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» կազմված է 2004-2006 թվականների Եռամյա ծրագրի հիման վրա: Եռամյա ծրագրով սահմանված ուղղությունները խարսխված են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (15.04.1992թ.) և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի (14.04.1994թ.) կողմից ընդունված՝ «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ի և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների և ստանդարտների վրա: Պաշտոնական վիճակագրության միջազգային ստանդարտները և երկրների վիճակագրությունների՝ դրանց համապատասխանությունը վարում է Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ):

ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը (SSՀՄ) պարունակում է ստանդարտների մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> (ԱՄՀ SSՀՄ-ին Հայաստանն անդամագրվել է 2003թ. նոյեմբերի 7-ից): Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ) անգլերեն լեզվով SSՀՄ տվյալների կատեգորիաների մասով ՀՀ վիճակագրական փորձառության վերաբերյալ, ինչն արտացոլում են ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>:

ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

15.04.2005

Հայաստանի կանայք և տղամարդիկ (վիճակագրական գրքույկ)

Գենդերային իրավիճակի ընդհանրական վերլուծությունը միջազգային հանրությանը ներկայացվել է ՄԱԿ-ի 1995թ. կանանց դրության վերաբերյալ Պեկինյան IV խորհրդաժողովում, որտեղ ձևակերպվել են նաև գենդերային հիմնահարցերը և առաջիկա գործողությունների ծրագրերը: Մասնավորապես, տեղեկատվական ապահովման բնագավառում խորհրդաժողովի բանաձևերի համաձայն սահմանվել է, որ տարածաշրջանային և միջազգային վիճակագրական ծառայությունները և պետությունները պետք է ապահովեն կանանց և տղամարդկանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հրապարակումների մատչելիությունը:

Առաջնորդվելով վերոհիշյալ բանաձևերով, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎՃ) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի (UNDP) և Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության (SIDA) օժանդակությամբ հրապարակել է «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկը հայերեն և անգլերեն լեզուներով: Գրքույկում գետնոված տեղեկատվությունը հիմնականում մշակված է ՀՀ ԱՎՃ տեղեկատվական բազաների տվյալների հիման վրա: Ցուցանիշների լրակազմը և հրապարակման կառուցվածքը կատարված է ըստ Շվեդիայի վիճակագրական կենտրոնական բյուրոյի կողմից տրամադրված տեխնիկական օժանդակության ձևաչափի, ինչպես նաև ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակների:

Գրքույկը նախատեսված է սպառողների լայն շրջանի համար, այն արտացոլում է Հայաստանում գենդերային հիմնահարցերը նկարագրող 2003թ-ի հիմնական ցուցանիշները (որոշ ցուցանիշներ ներկայացված են ժամանակագրական շարքերով): Ցուցանիշներն արտացոլում են գենդերային պատկերն ինչպես ժողովրդագրության, այնպես էլ առողջապահության, կրթության, սոցիալական, զբաղվածության, իրավախախտումների, իշխանության և ազդեցության ոլորտներում և կարող են օգտակար լինել գենդերային հիմնահարցերով զբաղվող վերլուծաբանների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքական վճիռներ կայացնող ատյանների համար:

2003թ. մշտական բնակչության թվաքանակում կանանց տեսակարար կշիռը կազմել է 51.9%, տղամարդկանցը՝ 48.1%: Կյանքի սպասվող տևողությունը կազմել է կանաց մոտ 76, տղամարդկանց մոտ 70 տարի: Առաջին ամուսնության միջին տարիքը քաղաքային բնակավայրերում կանանց համար կազմել է 23.9, տղամարդկանց համար՝ 27.6 տարեկան, գյուղական բնակավայրերում, համապատասխանաբար՝ 22.3 և 26.9 տարեկան: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են ընդամենի՝ 28.7%, իսկ տղամարդկանց գլխավորությամբ՝ 71.3%: 2003/2004 ուսումնական տարում միջին մասնագիտական կրթության ուսանողների թվաքանակը կազմել է 31115 մարդ, որից 69.7% կանայք: Նույն ժամանակահատվածում բարձրագույն կրթության ուսանողների թվաքանակը կազմել է 77944 մարդ, որից 55.8% կանայք: 2003թ. ասպիրանտուրա ընդունվածների, սովորողների և ավարտածների թվաքանակներում կանանց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար՝ 31.4, 35.4, 31.7%:

2003թ. 16-70 տարեկան բնակչության մեջ կանանց տեսակարար կշիռը կազմել է 52.4%: Այդ տարիքի կանանց մեջ տնտեսապես ակտիվ է եղել նրանց 55%, իսկ տղամարդկանց մեջ՝ նրանց 81%-ը: Ջրաղված է եղել նույն տարիքի կանանց 34%-ը, իսկ տղամարդկանց՝ 61%-ը:

Ջրաղվածների մեջ կանանց ամենաբարձր տեսակարար կշիռներն արձանագրվել են կրթության և առողջապահության ու սոցիալական ծառայությունների ոլորտներում, համապատասխանաբար՝ 81 և 86%:

2003թ. հանցագործություն կատարած դատապարտվածների թվաքանակում կանանց տեսակարար կշիռը կազմել է 5.9%:

2003թ. ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների միայն 5%-ն են կազմել կանայք:

Գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև դատական իշխանության մարմինների աշխատակիցների կազմում կանայք կազմել են, համապատասխանաբար՝ 48.9, 36.0 և 21%:

Տեղական ինքնակառավարման մամիններում և դրանց աշխատակազմերում կանայք կազմել են 22.9%-ը:

**ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հայաստանում ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի մշտական ներկայացուցչություն
Շվեդիայի միջազգային զարգացման գործակալություն**